ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

«ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-23/67» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայությունների /2-րդ դասարանի «Երաժշտություն», «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն», «Շախմատ» հանրակրթական առարկաների դասագրքեր/ գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 05.09.2022թ. ժամը 15:30-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Թամարա Սարգսյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռուզան Սաֆարյան

Կարինե Բաբայան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«Արևիկ հրատարակչություն» ՓԲԸ
2	«ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ
3	«Զանգակ-97» ՍՊԸ
4	«Պրինտ Բոքս» ՍՊԸ
5	«Վեքթս» ՍՊԸ
6	«Լիմուշ» ՍՊԸ
7	«ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ» տպագրատուն ԱՀ ԲԲԸ
8	«ԼԱՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ
9	«Սեկո-Պրինտ» ՍՊԸ
10	«ԱՍՈՂԻԿ» ՍՊԸ
11	«Տիգրան Մեծ հրատարակչություն» ՓԲԸ

3. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները																					
		Արևիկ հրատարակչություն ՓԲԸ		ԱՆՏԱՐԵՍ ՍՊԸ		Զանգակ-97 ՍՊԸ		Պրինտ Բոքս ՍՊԸ		Վեքթս ՍՊԸ		«Լիմուշ» ՍՊԸ		ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ տպագրատուն ԱՀ ԲԲԸ		«ԼԱՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ		Սեկո-Պրինտ ՍՊԸ		«ԱՍՈՂԻԿ» ՍՊԸ		Տիգրան Մեծ հրատարակչություն ՓԲԸ	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ																					
		Առանց ԱՀՀ	Ներառյալ ԱՀՀ	Առանց ԱՀՀ	Ներառյալ ԱՀՀ	Առանց ԱՀՀ	Ներառյալ ԱՀՀ	Առանց ԱՀՀ	Ներառյալ ԱՀՀ	Առանց ԱՀՀ	Ներառյալ ԱՀՀ	Առանց ԱՀՀ	Ներառյալ ԱՀՀ	Առանց ԱՀՀ	Ներառյալ ԱՀՀ	Առանց ԱՀՀ	Ներառյալ ԱՀՀ	Առանց ԱՀՀ	Ներառյալ ԱՀՀ	Առանց ԱՀՀ	Ներառյալ ԱՀՀ	Առանց ԱՀՀ	Ներառյալ ԱՀՀ
1	37266670	15000000	18000000	19600000	23520000	22300000	26760000	23152000	27782400	24900000	24900000	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
2	31047000	-	-	25870000	31044000	14700000	17640000	-	-	23900000	23900000	12940000	15528000	15437500	18525000	25870000	31044000	26000000	31200000*	-	-	-	-
3	31047000	-	-	-	-	-	-	-	-	24200000	24200000	-	-	-	-	-	-	20000000	24000000	21361000	25633200	25859400	31031280

* Մասնակցի գնային առաջարկը գերազանցում է գնման նախահաշվային գինը:

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5.1 **«Արևիկ հրատարակչություն» ՓԲԸ**-ի և **«Լիմուշ» ՍՊԸ**-ի հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5.2 **«Սեկո-Պրինտ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հայտի ապահովումը, ինչը շտկման ենթակա չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

6. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

6.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի պահանջները ապահովելու և հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման նպատակով, կասեցնել գնահատման գործընթացը, դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ **«Լիմուշ» ՍՊԸ-ի** կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովման իսկությունը ստուգելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.2 Հանձնաժողովի նիստը շարունակել ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանը ստանալուց և հանձնաժողովի կողմից մասնակիցների փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 609 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 07.09.2023թ. ժամը 12:00-ին

7. Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումների իսկության ստուգման արդյունքների մասին.

7.1 ՀՀ ֆինանսների նախարարության 07.09.2023թ թիվ 12/12-2/17662-2023 գրությամբ հաստատվել է **«Լիմուշ» ՍՊԸ**-ի կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովման իսկությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

8.1 **«Արևիկ հրատարակչություն» ՓԲԸ**-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8.2 **«Լիմուշ» ՍՊԸ-ի** կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից.

1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել **«Արևիկ հրատարակչություն» ՓԲԸ-ին,**

2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել **«Լիմուշ» ՍՊԸ-ին**:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 5.2 կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով՝ մերժել **«Սեկո-Պրինտ» ՍՊԸ**-ի հայտը **3-րդ չափաբաժնի մասով**՝ հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել.

«ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ–ի **«Զանգակ-97» ՍՊԸ-ի, «Պրինտ Բոքս» ՍՊԸ-ի** և **«Վեքթս» ՍՊԸ-ի** հայտերը **1-ին չափաբաժնի մասով,**

«ԱՆՏԱՐԵՍ», «Զանգակ-97», «Վեքթս», «ԼԱՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ների «ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ» տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ի հայտերը՝ 2-րդ չափաբաժնի մասով,

«Վեքթս» ՍՊԸ-ի, «ԱՍՈՂԻԿ» ՍՊԸ-ի և «Տիգրան Մեծ հրատարակչություն» ՓԲԸ-ի հայտերը **3-րդ չափաբաժնի մասով:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9.4 «Սեկո-Պրինտ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ չափաբաժնի մասով մերժվել է համակագի կողմից՝ գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10. Գնահատման արդյունքների մասին.

10.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ գնման գործընթացը 3-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, պայմանագիր չի կնքվում հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10.2 Հրապարակել գնման ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10.3 Հրապարակել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Թամարա Սարգսյան

---------- Ռուզան Սաֆարյան

---------- Կարինե Բաբայան

---------- Արսեն Սողոմոնյան /քարտուղար/